

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՂԱԹՈՆԻ ՆԱՄԱԿԸ

Մեծապատիւ Տէր

Սարգիս Մարտիրոսեան Սարգսեանց

Ի Նախիջևան

Կ. Պօլէ 23 հոյ. 1862

Սեպ. ամսոյ 24 թուականով գրած պատուական նամակդ պարոն Էմինեանի ձեռք երկու օր առաջ ստացայ շնորհակալու սրտիւ յորում կարգալով ձեր ազնիւ կենաց քաջառողջութեան ցանկալի լուրը յանձափս ուրախացայ և փութացայ պատասխանել ձեզ:

Արդեօք հնար է մի՞ ձեր անկեղծ բարեկամութիւնը մոռանալ թէև փոխանակ քսան երկու տարւոյ կրկնապատիկն ալ անցած ըլլար կողմնակի լուրթեամբ որուն պատճառն ոչ այլ ինչ է եթէ ոչ չգիտնալ ստոյգ յերկուց կողմանց թէ ուր գտանիմք, ուրեմն ասկէ ետեւ ըստ ձեր ու ըստ մեր փափաքանաց ստէպ գրեմք միմեանց յօգուտ մեր և ազգին առևտրական և ազգային լուրեր տալով նամակնուս մէջ:

Վարդանեան Պօղոս աղային մատուցի ձեր սիրոյ ողջոյնը. յոյժ ուրախացաւ և կը մատուցանէ ձեզ իւր փոխադարձ սիրոյ ողջոյնը. Նորա և իմ գործը տասն և հինգ տարիէ ի վեր վաճառականութիւն է թէ Ասիայ և թէ Եւրոպայի հետ: Առևտրական գործով բարեպատեհ առիթ ունեցայ անցեալ մայիս ամսոյն մէջ Վարին երթալ և չորս ամսի չափ մէջ ամենասիրելի մեծն Հայաստանի մէջ ժամանակ անցունել որուն օրհնեալ հողերը և նախնեաց հոյակապ շինութեանց սգազգած աւերակներուն ամէն մէկ քարը ամէն օր հաղարիցս համբուրելով դառնապէս կարտասուէի. աւա՜ղ որ մեր ազգը դեռ կատարելապէս չգթափէր իւր մահաբեր թմրութենէն, չը տեսնէր իւր հսկայա-

ձև մարմնոյն վրայ չորս կողմէն առած խորին վէրքերը ու դարմանելուն փոյթ չընելէն ի զատ, ընդհանուր վէրքեր ալ ինքը իւր ձեռքով կը բանայ ի տաճկաստան լուսաւորեալ ու խաւարեալ կողմած կուսակցութեանց ձեռքով, ուրիշ տեղ ալ ուրիշ կուսակցութեանց ձեռքով: Մենք հոս կաշխատիմք միշտ պատեհի զօրաւոր կուսակցութեանց բարձմանը համար և յի եմք յուսով որ մօտեցա պիտի յաջողիմք, դուք ալ այդ կողմերուն կուսակցութիւնները, թէ որ դեռ կան, միացունելուն հոգ տանիք: Բանդի թէ որ մեր ողորմելի ազգը իւր ցաւալի վէրքերը բուժելով յաւիտեան կենդանի մնալուն և օր քան զօր թէ բարոյապէս և թէ նիւթապէս զարգանալուն մէկ հատիկ զօրաւոր միջոց մը ունի նէ՝ այն միջոցը ազգային միաբանութիւնը ու սէրն է, ապա թէ ոչ անկանգնելի կործանմանը կասկած չիկայ, այս վճիռը աստուածորդին տուէր է: Հիմա ազգին խիստ վտանգաւոր ժամանակն է, պէտք է որ թէ եկեղեցականք, թէ աշխարհականք սէր-խաղաղութիւն քարոզեմք բանիւ և դործով և ոչ թէ իրաւամբ կամ յանիրաւի միմեանց վշտանալով ազգին մէջ անհաշտ թշնամութիւններ յարուցանեմք որով արտաքին թշնամութիւններն ալ որ մեզի դէմ պակաս չեն, խրախուսեմք: Այս գրած ազգային խօսքեր չըլլայ թէ ի թիւր միտս մեկնէք կամ մէկ ակնարկութիւն մը կարծէք: Իմ սովորութիւնս է որ հայաբնակ երկիր նամակ գրեմ՝ ասանկ խօսքեր քիչ շատ նամակիս մէջ կը գրեմ, քանզի դժբաղդաբար ժամանակէ մի ի վեր է որ ամէն տեղ հայք յուզման մէջ են. ոմանք յուզմունքը բարի նշան կը համարին ազգի մը համար, բայց ես կըսեմ որ, երբ չափը չանցնի, այսինքն՝ երբ յուզմունքը ազգային խորհրդարանէն դուրս չելլէ ու ազգակործան խռովութեան չփոխադրվի. երբ վէճը խորհրդարանէն դուրս չգլործկայ ու քաղաքական պատերազմի չդառնայ, ինչպէս բազմիցս պատահեր է ու մեծամեծ ազգեր բնաջինջ ըրեր՝ է:

Այսօր Զէյթիւնի ցաւալի խնդիրը ի նպաստ գէյթիւնցոց լուծվելու վրայ է:

Անցեալ ուրբաթ երեկոն Գաղղիոյ և Խալէքոյ դեսպանները և Անգղիոյ դեսպանատան բոլոր պաշտօնեաները (Անգղիոյ դեսպանը հոս չէ) տեղւոյս հայոց Արեւելեան թէաւորոն գացին և տեսնելով թէ հայերէն և թէ գաղղիերէն լեզուաւ հայոց ներկայացուցած խաղերը շատ զովեցին հայոց թատեր-

քական յառաջադիմութիւնը որ նշան կրնայ համարվել ուրիշ տեսակ յառաջադիմութեանց:

Նախկին պատրիարք Յակոբ եպիսկոպոսը որ մօտերս յեւրոսաղէմ ուխտի դնաց, հոն գիշերը իւր անկողինին մէջ դիպուտով մը մօրուքը բռնկելով անկէ ալ անկողնոյն վարացուրը և հանդերձները՝ անձը նոյնպէս չարաչար վնասեր է որ բժկաց բոլոր դարմանը ընդունայն ելնելով՝ այս ցաւալի դիպուածէն չորս հինգ օր ետե վախճաներ է:

Հոս ինչպէս լսած էք Օսմանցիի լիբան 100 է, ալ թըղթադրամ չմնաց և ոսկին միշտ այս գինը բանելու համար Օսմաննան տէրութիւնը պանքա մը պիտի հաստատէ Շառը Լաֆիթ անուն շաղիացի սեղանաւորի մը ձեռք որուն հետ արդէն պայմանաւորութիւնքը հաստատված է և իրադէյն ալ ելած:

Թէ որ առիթ ունենաք տեսնալ մեր ազնիւ բարեկամ Ալթունճեան Մանուկ աղան մեր սիրոյ ողջոյնը անոր մատուցանելուն բարեհաճիք:

Կաղաչեմ ընդունել իմ անկեղծ սիրոյս և խորին յարգանացս հաւաստիքը որով մնամ միշտ

Մեծապատիւ Տեառնդ

անձնուէր

ԱՂԱԹՕՆ

Յ. Գ. Արդէն 15 տարի է որ ամուսնացած եմ և այժմ 4 դաւակի տէր երկու մանչ և երկու աղջիկ, ուստի բոլոր ընտանիքս ալ ձեզ և ձեր ազնիւ ընտանեացը սէր և յարգանք կրմատուցանեն:

Այս Ցաճկահայոց համակրելի գործիչ և 1860 թուին ՕԼԳԱՅԻՆ սահմանագրութիւնը խմբագրողներից մէկի — Աղաթօնի հետաքրքրական նամակը մինք ստացել ենք մեր բարեկամ պ. Սերովբէ Զաթալբաշեանից, որի ձեռքը անցել է իւր մօրապապ Սարգիս Մարտիրոսեան Սարգսեանցից:

Նախիջևանցիք, որոնք դեռ իւրեանց Ղափում եղած ժամանակները միշտ յարաբերութիւն են ունեցել Անատոլիոյ և Պոլսաբնակ հայերի հետ, միշտ երթեկեկելով Պօլսի ու Փոքր-Ասիոյ ծովեզրեայ քաղաքները և առևտուր անելով Ցաճկահայերի հետ, Նոր-Նախիջևան գաղթելուց յետոյ էլ, նամանաւոր առաջին ժամանակները, շարունակել են իւրեանց այդ յարաբերութիւնը: Նախնական առևտրական յարաբերութիւնից էլ, ինչպէս այդ յաճախ պատահում է հետագայեւ առաջ է եկել բարեկամութիւն Նախիջևանցի և Պօլ-